

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
2010 ԹՈՒԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԵՋ

Շաբաթ, Յունուար 23ին Առաջնորդ Սրբազան Զօր Նախագահութեամբ եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի նորընտիր Ատենապետուհի՝ Տէպի Տէրտէրեանի ատենապետութեամբ, Առաջնորդարանի մէջ տեղի ունեցաւ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի 2010 թուի առաջին ժողովը:

Սրբազան Զայրը աղօթքով բացաւ ժողովը եւ ներկաներուն ուշադրութեան յանձնեց Թեմէն ներս գոյութիւն ունեցող Քրիստոնէական կրթութեան վերաբերող հարցեր: Ատենապետուհին ներկայացուց Խորհուրդի նոր կազմը եւ անդամներուն ծանօթացուց իրենց պարտականութիւնները:

Խորհուրդը նկատի առաւ 2010 թուականի համար կազմուած գործունէութեան ծրագիրը: Ժողովի ընթացքին հաստատուեցաւ այս տարուան Կիրակնօրեայ Դպրոցներու ուսուցիչներու վերապատրաստման դասընթացներու ժամանակացոյցը եւ դասաւանդուող նիւթերուն ցանկը (Յունիս 24էն մինչեւ Յուլիս 26), որ պիտի գործադրուի Սանահինի Ծրագրի շրջանակի ծիրէն ներս: Ժողովը անդրադարձաւ նաեւ Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներուն մէջ գործածուող ուսումնական ծրագրին, որուն մէջ կատարուեցան որոշ փոփոխութիւններ:

Քրոստոնէական Դաստիարակութեան Խորհուրդը ընդգծեց նաեւ Խորհուրդի գործունէութեան լուսաբանումը Թեմէն ներս եւ ընդունեց նոր ծրագիրներ:

Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդը Առաջնորդ Սրբազան Զօր կողմէ հաստատուած կազմ մըն է, որ կը զարգացնէ, կը գործածէ եւ կը նախատեսէ Արեւմտեան Թեմի Քրիստոնէական կրթական ծրագրերը, որոնց միջոցով կ'ամրապնդուին հայ մանուկներու եւ պատանիներու քրիստոնէական հաւատքի հիմերը: